


ներութիւն գտնելու համար: Նոքա շատ սիրով ընդունուեցան կայսեր և գիտնական մանդարինների կողմից: Ժամացոյցներով յատկապէս Ռիլլին մեծ յաջողութիւն և ընդունելութիւն էր գտնում մեծամեծներից: Երբէք չմոռանալով միսիոներական նպատակը: Նա այնքան զգոյշ էր իւր գործի մէջ, որ յաճախ դժուար էր որոշել ինքն է կոնֆուցիուսի վարդապետութիւնն ընդունելի թէ Չինացիներն են քրիստոնեայ դարձել: Ճիզուրիքների գործը բաւական տեսական էր: Նոյն իսկ 1644 թ. մեծ յեղափոխութիւնը, որով ներկայ մանջուրական կայսերական տունը կառավարութեան գլուխն անցաւ, չկարողացաւ ոչինչացնել նորան: Ճիզուրիք հայրերից մէկը՝ Նաալ՝ թագաժառանգի դաստիարակն էր դարձել: այբի կայսրուհին և նորա որդին մինչև իսկ մկրտուեցան 1630 թ.

Բայց այս յաջողութիւնը երկար չտևեց: Մի քանի ոչ Ճիզուրիք միսիոնարներ գանգատուեցան պապին երկիւղ կրելով Ճիզուրիքների բռնած դիրքից: Պապը արգելեց չինական Տին և Նանդ-տի արտայայտութիւններն աստուածութեան մասին և թոյլ տուեց միայն Տին-չու բառը, որ նշանակում է երկնից Տէր: Բացի սորանից յայտնեց, որ չինական փիլիսոփայութիւնը դէմ է քրիստոնէական օրէնքներին թէ կոնֆուցիուսի նախահարց պաշտամունքը հերետիկոսութիւն է և միսիոնարներին արգելեց դպրոցներում չինական զբոսը գործածել իրենց սնտիապաշտ և հակաստուածային բովանդակութեան համար: Պապի բռնած այս դիրքը շատ վիրաւորական էր չինաց կայսրների համար: բոլոր քրիստոնեայ պաշտօնեաներն արձակուեցան և քրիստոնէութեան տարածման առաջ խոշոր դժուարութիւններ յառաջ եկան: Այնուհետև 1747, 1805, 1815 և 1832 թուին սկսուեցան միմեանց յետևից հալածանք, որով ոչ միայն քրիստոնէութեան մեծ վտանգ էր սպառնում, այլ և չինացիների մէջ զօրացաւ դէպի օտարները նկատուած ատելութիւնը:

Բողոքական եկեղեցիների միսիոնարութիւնն սկսուեցաւ այս դարու սկզբում եւրոպական պետութիւնների պաշտպանութեամբ: Հեղինակը կարծում է, որ միսիոնարները եր-

բմն օգտուելով այս պաշտպանութիւնից վիրաւորել են չինացիների ազգային զգայմունքը և ատելութիւն վարժեցրել դէպի բնիկ չինացի քրիստոնեաները: Այս աշխատութիւնը գիտնականից դատ գործնական մեծ նշանակութիւն ևս ունի ներկայ չինական յուզումների պատճառով:



ԵՐԿՐԱԳՈՐԺԱԿԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ.

(Շարունակութիւն) *

Հայէ Էդէլ (Хлебный жук — Anisoplia austriaca).—Մորեխից յետոյ այս միջատը, շնորհիւ իր ստատիկ աճման, շատ տեղերի հացարոյսերի համար երկրորդն է համարեա իր աւերիչ յարձակումներով: Հացի բզէզը մի փայլուն սև կամ սև մետաղային մուր կանաչ գոյն ունի ներքեւից թաւամաղ է, իսկ վերեւից համարեա կոկ: Դիւի և պարանոցի վահանակի վրայ կան շատ մանր և խիտ կէտեր: Վերնաթևերը շերտաւոր և անորոշ երկնեւանդ են, կողքերից սեղմուած և գոյնով բոլորովին կարմիր կամ դեղին-խարաւաշ, յետին ծայրերը մուր կամ բոլորովին սև են լինում: Երկարութեամբ մինչև 6—7 գծաչափ է:

Շատ անգամ է պատահել, որ հացի բզէզը, ոչնչացրել է գաւառների, նահանգների ամբողջ ազգաբնակչութեան հացարոյսերը, այսպէս, օրինակ՝ 1865—1873 թ. այդ միջատը ոչնչացրել է հարաւային Ռուսաստանի բոլոր գաւառներն և մի քանի միլիոն ռուբլու փրաս է հասցրել ազգաբնակչութեանը: Ներկայ տարուայ մէջ հացի բզէզի քանակը այնքան մեծ է եղել, որ շատ նահանգներ տասնեակ հազար ռուբլի ծախքեր են տրել նրանց դէմ միջոցներ ձեռք առնելու համար: Շատ ան-

* Տես Արարատ 1900 թ. համար ԺԲ. եր. 596:

1. Դեռ շատ չէ անցել այն ժամանակից, երբ Օգեսայի գաւառական վարչութիւնը հացի բզէզը ոչնչացնելու համար միայն ծախսել է 23,000 ռ.

գամ՝ և պատահել, որ ամբողջ զարնանային ցանկերի կէս մասը զօհ է գնացել այդ միջատի՝ աւերիչ յարձակմունքներին:

Տարածուելով զարուս ջորնի արահերում այդ վնասարար միջատը ծծում է թէ ցօղունի տակից, թէ հասկի վրայից ամբողջ հիւթը և չորացնում բուսականութիւնը: Առաջուց առատութեամբ իր ձուերը հողի մէջ է դնում որոնցից հետեւեալ տարուայ մայիսին դուրս են գալիս մանրիկ որդեր, որոնց նկատելու համար պէտք է գարնանացանի զարուս ջորնի բոյսերը պոկել և արմատներին նայել, այն ժամանակ կերելի թէ ինչպէս նրանք այդ շատակիւր միջատները շրջապատել են բոյսերի արմատները: Խելով արմատներից բոյսի համար կարեւոր նիւթը, հացի բղէզը այդպիսով իսպառ չորացնում է բոյսը: Անծա-

տելի գուժմար, իսկ ամբողջ Խերսոնի նահանգը գործ է դրել այդ նպաստակի համար 120,000 ուս, իւրաքանչիւր գիւղ համարեա 500—600 ուս ոչ պակաս:

1. Տփիսիսի Ախալքալարի գաւառն ևս նոյնպէս այս տարի երկրաշարժի հասցրած վնասներից յետոյ մեծ չափով վնասուեց հացի բղէզից: Այս միջատը անցեալ ամառ այդ շրջանի մի քանի գիւղերի թեթեւ վնասներ հասցնելուց յետոյ, այս տարի սկսել է խիստ մեծ չափով, Դեռ մինչև օգոստոս ամիսը քանից աւելի գիւղեր ենթակայ են եղել միջատների սոսկալի յարձակմունքներին: Ամբողջ հարկւրաւոր քառակուսի վերատեր տարածուող գարու և ցորենի արտերը հողին են հաւասարուել: Ազգարնակութիւնը դիմել է գաւառական և միւս աւելի բարձր վարչութեանց, որ իրենց միջոցներ սովորեցնեն ազատելու ապրուստի միակ աղբիւրը: Ցեղական գաւառական վարչութիւնը և Պովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը միահամուռ ջանքերով միջոցներ ձեռք առան օգնութեան հասնելու թշուառ ազգարնակութեանը: Աւերմունքի ենթարկուած տարածութիւնը մօտ 40,000 զեսեսաւին է, որից կերակրւում է 1700 տուն՝ մօտ 13,000 բնակիչներով: Այս միջատը նկատուած էր գեռերի տարի սրանից առաջ, սակայն փոքր քանակութեամբ և առանձին վնաս չէր հասցնում, և եթէ այժմս էլ նախկին տարիների նման անուշադրութեան մատնուի և վերջնական միջոցներ ձեռք չառնեն նրա դէմ, հետեւեալ տարում բոլոր վարակուած գիւղերում անհնար կլինի ցանք տնել և միջատը կարող է անցնել ուրիշ գաւառներ, նահանգներ և ընդհանուր աղէտի պատճառ դառնալ և որ մի ժամանակ ուրիշ շատ գաւառներ, քաղաքներ, գիւղեր էր կերակրւում: սովի կմառնուելն:

ցած բոյսերն ևս ազատ չեն նրանց յարձակմունքից: մեծացած բղէզը նստում է հասկերի վրայ և ծծում նրանց հիւթը և երբ մի արտի բուսականութիւնը ոչնչանում է, այլ ևս պաշար չգտնելով, թռչում է մի ուրիշ տեղ, որ զեռ վնասուած չէ:

Հացի բղէզը երեւան է գալիս մօտաւորապէս մայիսի 20-ից մինչև յուլիսի կեսերը, մեծ քանակութեամբ յուլիս ամսում: Ապրում է 30 օր, իր երեւուլուց երեք շաբաթ յետոյ ձուիկներ է դնում ցանած արտերի հողի մէջ 1—5 վերջ: Խորութեամբ երկու և կէս շաբաթից յետոյ այդ ձուերից դուրս են գալիս թրթուրներ: Թրթուրը 12—15 գծաչափ երկարութիւն է ունենում և լինում է գոյնով սպիտակ, իսկ վերջը սև՝ ծածկուած կլոր, սպիտակ բծերով: Գլուխը փոքր է, և զեղնագոյն: Թրթուրը սնուում է միսիայն հացաբոյսերի արմատներով և մօտ երկու տարի (22 ամիս) ապրելուց յետոյ մանում է հողի մէջ 3—6 վերջոյ խորութեամբ և այնտեղ հարսնեակ է դառնում: Հարսնեակը 2½ շաբաթ է ապրում, որը իսկոյն ճանաչուում է իր բարակ, լծախնցիկ ծածկոցով: Որովհետև հասկաւոր բոյսերն են հացի բղէզի միակ կերակուրը, ուստի և նրա աննցմանը նպաստող պատճառները կարելի է հետեւեալները համարել. ա) հացաբոյսեր ցանած հողերի շատութիւնը, որի պատճառով և շատ ցանքեր ուշանում և ուշ էլ հաւաքուում են. բ) վարի երեսանց կատարելը, որի պատճառով և հացի բղէզի թրթուրներ պարունակող հողի շերտերը անվնաս են մնում և թրթուրները անարգել կերպով զարգանում են և գ) դաշտերում միմիայն գարնան ժամանակ ցորեն ցանելը:

Ինչպէս առաջ նոյնպէս էլ այժմս Ռուսաստանի երկրագործներից, հողատերերից շատերը այսպիսի հանգամանքներում ուղղակի կանառներով են հեռացնում իրենց արտերից յիշեալ հացի բղէզին: Հնայելով որ կառավարութեան կողմից այդ արգելուած է և օրինական զանուղը 50 ուս տուգանքի է ենթարկւում: Պարզ է, որ սոյն միջոցը հացի բղէզի դէմ կուռելու տանալու միջոցն է համարուում: ձգմարիտ է, ձեռքերով հաւաքելը նրանց թի-

ւր քչացնելու ամենալաւ միջոցը պէտք է համարել բայց աւելի ժամանակ և աշխատաւոր ձեռք է պահանջում և բայց զրանից շատ հացարոյսեր կոխան կլինեն մշակների ոտների տակ: Ասում են որ կանառներով հեռացնելիս հացի բղէկը թռչումս գնում է հարեան արտերը, որտեղ աւելի եռանդով է սկսում ոչնչացնել հացարոյսերը: Յոճախ պատահել է որ մշակները սկսել են հաւաքել մի արտի մէջ եղած հացի բղէկները և զեռ չվերջացրած, մէկ էլ յանկարծ նոյն արտի հակառակ կողմից ներս է մտել միջատը և համարեա նոյն քանակութեամբ նստել հացարոյսերի վրայ: Այդպիսի դէպք չի կարող տեղի ունենալ կանառներ զործ ածելիս, որովհետեւ այդքան ժամանակում կարելի է 5—6 անգամ դուրս բշել հացի բղէկները: Ահա թէ ի՞նչու համար շատ անգամ կառավարութիւնը թոյլ է վերաբերում գիւղացւոց այդ վարմունքին և խիստ միջոցներ չի ձեռք առնում վերացնելու այդ սովորութիւնը: Եւ մի՞թէ հնարաւոր է, որ տեղական ոստիկանութիւնը այդպիսի յանցաւորների վերաբերմամբ բարեխղճօրէն իր պարտքը կատարէ, աչքի առաջ ունենալով, որ ամէն մի գիւղում այդպիսիները բաւական մեծ թիւ են կազմում, որոնք մի քանի հարիւրաւոր քառ վերստ տարածութեան վրայ են դործում: Բայց որպէսզի օրէնքը մասամբ կատարած լինեն, շատ գիւղացիներ այսպէս են վարւում: Նախ քշումս տանում են պարաններով իրենց դաշտից դուրս և յետոյ յարմարաւոր տեղում սկսում են ընդհանուր ոյժերով և առանձին ջանքերով ձեռքերով հաւաքել: Բայց այս միջոցն ևս ի հարկէ օրինական չի համարւում:

Յայտնի է, որ հացի բղէկը գնում է իր ձուաները մեծաւ մասամբ գարնանային ցանքերի վրայ: Աչքի առաջ ունենալով այս և վերելում յիշուած նրանց աճեցման նպատակով պատճառները, հացի բղէկը ոչնչացնելու հիմնական միջոցներ հետեւեալները պէտք է համարել.

Ա. Պէտք է դաշան ամբողջապէս այրել, որպէս զի բոյսն իր արմատով այրուելով, ոչնչանան հողի մէջ պատուարուած միջատների ձուաները: Այսպիսի դէպքում պէտք է խոր-

հուրդ տալ գիւղացւոյն, որ չհնձէ, ստանց այն էլ վնասուած անպէտք արտը:

Բ. Անհրաժեշտ է երկու տարի անընդհատ մի քանի անգամ խորը վարել, որովհետեւ միմայն այդպիսի պայմաններում կարելի է սպասել, որ հացի բղէկի թրթուրները, որոնք երկու տարի համարեա ապրել են հողի մէջ, ոչնչանան ցրտերից և կամ կերակուր դառնան թռչուններին և մրջիւններին:

Գ. Վարուցանքը կանոնաւոր պէտք է կատարել, հարկաւոր է շուտ ցանել և հաւաքել, որի համար պէտք է ընտրել շուտ հասունացող և ընտիր սերմեր, և որովհետեւ աշնանացանի ցրտերը աւելի վաղ է հասնում գարնանացանից, ուստի և այնպիսի տեղերում, ուր շատ կան հացի բղէկներ, պէտք է տարածել աշնանացանքը, և այդ պէտք է կատարել ամերիկական եղանակով:

Դ. Պէտք է „Շոս“ (*Saja hispida*) առնուանուած Ալժիրից, Զինաստանից, ճապոնիայից Եւրոպա նոր մուտ գործած ամենահիւժայի արժան բոյսի մշակութիւնը տարածել, որը երբէք երաշտից չի վնասուում:

Ե. Յայտնի է, որ հացի բղէկները դաշտերի վրայ յարձակուելիս աւելի կանգ են առնում պահում են առաւելապէս եղբրքում, որոնք այդ պատճառով աւելի հարուստ են լինում բղէկներով, քան դաշտի միջին մասերում: Ահա այս պատճառով բղէկը յաջող հաւաքելու համար խորհուրդ են առլիս արտերին այնպիսի ձեւ տալ, որ եղբրերը, որքան այդ հնարաւոր է, քիչ տարածութիւն բռնեն, այսպէս սրինակի քառակուսի ձեւով կամ մինչև անգամ եռանկիւնաձեւ, որովհետեւ այսպիսի հանգամանքում աւելի քիչ թուով մշակներ կհարկաւորուեն և կարելի կլինի քիչ ժամանակում աւելի մեծ քանակութեամբ բղէկներ հաւաքել և վերջապէս աւելի քիչ հացարոյսեր կոխան կլինեն:

Զ. Այս միջատի գէղմ կուռելու համար Ռուսաստանի գերմանական դպրութիւնից միւսում գործադրում են նաեւ հետեւեալ պարզ-

1. Այս օգտակար բոյսի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար խորհուրդ ենք տալիս կարգաւ „Ранняя Соя“ Овсипского Պետերբուրգում տպագրուած բրոշիւրը:

սրամիտ և յարմարաւոր միջոցը: 2 3 սաժ. երկայնութիւն ունեցող մի փայտի վրայ ամբարացրած է սանդղաձև մետաղաթիւից և կամ ուղղակի երկաթից պատրաստած առամներ, որոնք մէկ մէկուց մօտաւորապէս կէս կէս վերջոյի հեռաւորութիւն են ունենում: այդ ձողին հակառակ կողմից ամբարացրած է լինում քաթմանէ մի տողակ: երկու մարդ անցկենալով արտի միջից, ասերում են ցանքը և հասկերի վրայ նստած բղէկը ընկնում է ուղղակի սանդղին ամբարացրած տողակի մէջ: Մի այսպիսի դործիքի միջոցով երկու մարդ մի օրում կարող են հաւաքել մինչև 26 փութ բղէկ:

Է. Աւելի նպատակայարմար միջոց պէտք է համարել այս վերջերս հարաւային Ռուսաստանի գերմանացիներէ և զիւգացիներէ ձեռնարկած հացի բղէկներ հաւաքելու միջոցը սովորական ձեւի միջատարանական թակարգներով (энтомологическимъ сачкомъ) 1: Այդ թակարդը բաղկացած է մի ամբողջ ամուր պողպատեայ 1/4-դ. հաստութիւն ունեցող շրջանակից, որի արամագիծը 8 վերջոյի է. նա ամբացած է երկու արշին երկարութիւն ունեցող բարակ փայտի վրայ հետեւեալ կերպով: Շրջանակի երկու ծայրերը ծռուած, կեռացած են և այդ կեռացած ծայրերի արանքում տեղաւորած է բարակ փայտի ծայրը և միասին փափուկ մետաղաթիւով ամուր փաթեմած է: Թակարդի ցանցը, որ պատրաստած է պինդ, ողորկ փայլեցրած սև բարակ կտաւից, կտրած է շրջանակին կոնաձև տողակի ձևով: Արպէս զի աւելի պինդ լինի այդ շրջանակի շուրջը քաթմանից ամուր երկը (շէրիա) են կտրում, որովհետև սովորաբար գործադրութեանց ժամանակ բամբակեայ կտաւը շուտ է մաշւում և գուրս է դալիս շրջանակի վրայից:

Թակարդի միջոցով կուռելու առաջին

1. Պ. Էրեյները երկրագործութեան նախարարութեան հրատարակած մի բրոշիւրում առաջարկում է հացի բղէկի հետ կուռելու այդ վերոյիշեալ նոր միջոցը, որի համար նախօրօք փորձեր են կատարուել Եկատերինոսլաւի նահանգի Բրոդսկոյ կալուածքում:

Փորձը այսպէս է տեղի ունեցել. վեր են առել սայլի քիզիի երկու առաջքնոց (двухъ передка), որոնց խրաքանչիւրին լծուած են եղել մի զոյգ ձի. այդ առաջքների (передками) միջ ձգել են 180 սաժ. երկայնութիւն ունեցող մի հաստ թուի, որովհետև արտի լայնութիւնը 150 սաժ. է եղել: Յետոյ երկու մշակներ այդ երկու անպատրաստի սայլերի վրայ նստած ուղեւորուել են քամու ուղղութեամբ հանդարտ քայլերով իրար շուրջահաւան ուղղութեամբ: Չգուած թուր անցնելով բղէկներով հարուստ արտերի միջով, քշումն ամառում էր նրանց դաշտի հակառակ օրինակ ա. կողմը: Արտի ծայրը չհասած, երբ դեռ 30—40 սաժ. է մնում մշակները կանգ են առել 1/4 ժամ որպէս զի վախեցած բղէկները քիչ հանդարտուեն և նստեն արտի եզրի բուսականութեան վրայ, որից յետոյ նոյն ճանապարհով կրկին կտ են դնացել արտի միւս, այսինքն բ. եզրը: Առաջին անգամ թուր դաշտի միջով անցկացնելիս բղէկի աննշան մասը հասկերի վրայից ցած են թափուել հողի վրայ, բայց աւելի մեծ մասը ամբողջ խմբերով բարձրացել են վերև և անցկացել դաշտի ա. կողմը, Վերադարձին թուր վերցրել է մնացած բղէկներին, և միացրել նրանց արտի ա. ծայրում առաջուց հաւաքուած բղէկների խմբին, որոնք մինչ այդ կալուղացել են միջոց գանել նորից գետնի վրայից բարձրանալ հասկերի վրայ: Վերջին խումբ բղէկները արտի ծայրում հասկերի վրայ քիչ հանգստանալուց յետոյ, բարեխաջող քամու ուղղութեամբ տեղաւորել են թակարդներ բռնող պատանիններէ մի շարք՝ մէկը միւսից այնպիսի հեռաւորութեամբ, որ թակարդները արագ շարժելիս կամ բարձրացնելիս մէկմէկու չզլիւզէին: Նախօրօք թակարդի գործածութիւնը այդ պատանիններին սովորեցնելուց յետոյ, նրանց թոյլ են տուել բղէկներ որսալ, որի ժամանակ պատանինները հաւասար և մանր քայլերով անցնելով արտի միջով աջ և ձախ կողմերից, քաշում էին թակարդը և ամէն անգամ բարձրացնելիս շրջում էին կոթի վրայ թակարդի շրջանակը այնպէս, որ նա ընդունում էր ուղղահայեաց զիրք: Այս գործողութիւնը տեղի էր ունե-

նում ուղղակի քամու հակառակ ուղղութեամբ և հանդարտ նստած բլեզը առանց կասկածելու վերահաս վտանդից, վայրկենաբար բոյսի վրայից ընկնում էր թակարդի մէջ յատակի վերայ և կարճ ժամանակուայ ընթացքում հաւաքուել էր մինչև 1 գրվ. և դեռ աւելի հացի բլեզ: Բլեզներ որսալիս եղանակը չորային էր և շոգ, փշում էր հաբաւարեւելան մեղմ քամին: Առաջին օրը գործել էին միայն 16 սոյնանման թակարդներ, որոնց մօտ կանգնած էին 3 մարդ՝ բռնած ունենալով ամուր, բարձր տուրակներ, որոնց մէջ լցնում էին թակարդների մէջ հաւաքուած բլեզները: Արդէս զի աշխատաւորները աւելորդ կերպով դաշտի մէջ այս և այն կողմ չերթեկէն, որսացուած բլեզներ հաւաքողներին խրաքանչիւրը ունէր իր ձեռքի տակ պատանինների մի ամբողջ խումբ, որոնք իրենց թակարդների մէջ բաւականաչափ բլեզներ հաւաքելուց յետոյ, հրաման ստանալուն պէս կանգ էին առնում և առանց տեղից շարժուելու, ձեռքերով բռնում իրենց թակարդները, որպէս զի այդպիսով արգելեն հաւաքուած բլեզներին դուրս լըռել, որից յետոյ ընդունողներին ամէն մէկը հերթով մօտենում էր իր խմբի պատանիններին և հաւաքում նրանցից բլեզները: Այս աշխատանքը առաջին օրուայ մէջ 3 ժամ էր տեւել և այդ ժամանակուայ ընթացքում 3 փութ 10 գրուանքայ, այսինքն 215,800 բլեզ էր հաւաքուել, (եթէ 1660 բլեզը 1 գրուանքայ հաշուելու լինենք): Այս ամբողջ աշխատանքը 8 ա. 10 կուպ. ծախք է նստել, 16 պատանինների խրաքանչիւրին 20-ական կուպ. վարձ հաշուելով—3 ա. 20 կուպ., 3 մշակ 40-ական կուպ.—1 ա. 20 կուպ., 4 ձի 50-ական կուպ.—2 ա., ուտելիք և ուրիշ մանր ծախքեր 1 ա. 70 կուպ. Այսպիսով ուրեմն 1 գրուանքայ հաւաքած բլեզը նստում է 6,2 կուպ. ծախք:

Թակարդներով բլեզներ որսալը պէտք է սկսել յունիսի սկզբներին, որպէս զի այդպիսով միջասնների մեծ մասը նախ քան ձու դնելը ոչնչանայ: Այս եղանակով որսալու ամենալաւ և յարմար ժամանակը պէտք է համարել օրուայ շոգ ժամերին, ժամի 11—3-ը ծաշից յետոյ, Բլեզներին հալածել պէտք է թոկով քա-

մու ուղղութեամբ. թոկը պէտք է լինի շատ պինդ, որպէսզի աշխատութեան ժամանակ յանկարծ չկտրուի, որ աւելի յաճախ է պատահում երբ արտը լայն է 100—150 սաժ.: Ինչ վերաբերում է բլեզներ հաւաքելու համար գործածուելիք տուրակներին, հասկանալի է, որ նրանք ևս պէտք է լինեն նորը և լմանձր քաթանից կարած, հակառակ դէպքում բլեզները միջոց կունենան դուրս գալ նրանց միջից: Տուրակների մէջ 20—25 գրուանքայ բլեզ հաւաքելուց յետոյ, ամենայն արագութեամբ այդ հաւաքածը պէտք է լցնել մի աւելի մեծ տուրակի մէջ, իսկ երեկոները գործն աւարտելուց յետոյ, բոլոր հաւաքած բլեզը եռացրած ջրով սպանել, որից յետոյ կամ խողերին ընտանի լըռուչուններին իրեն կերակուր պէտք է ծառայեցնել և կամ իրեն աղբ գործ ածել: Ինչ կասկած, որ այս կերպ կատարած գործը աւելի յաջող է առաջ գնում, քան ձեռնարով կատարածը և բացի դրանից հացարդսերն ազատ են լինում կոխկրտուելուց: Հացի բլեզներ որսալու յաջողութիւնը բացի վերոյնշանակեալ պայմաններից (շոգուց, մեղմ քամուց, բլեզներին հանդարտ քշելուց) կախումն ունի աւելի դաշտի դիրքից և հարեան բուսականութիւնից: Եթէ դաշտը հարթ է և հարեան դաշտերում ցանուած են՝ եղիպատայորեն, կորեկ, գետնախնձոր և առհասարակ բլեզների յարձակութիւնից ազատ բոյսեր, յաջողութիւնը անկասկած է:

Բացի հացի բլեզի դէմ կռուելու այս վերոյիշեալ միջոցներից ապագայ հնարագէտի համար խիստ կարեւոր է իմանալ, որ հացի բլեզը միայն անձրեային և քիչ մնայլ ամպամած եղանակներին է սակաւաշարժ և դանդաղիտ զառնում¹, բայց երբ երկինքը պարզ

1. Երկրագործութեան նախարարի գիւտնատան մէջ այս ասորի Ախաթալաքի գաւառի հացի բլեզից և հօտեհօտեհ մոլոկից վնասուած գիւղերի վերաբերութեամբ մասնագէտների մի խորհրդակցութիւն եղաւ, որը հետեւեալ եզրակացութեան եկաւ. ա. գարնանացան ցորենը և գարին համարել ենթակայ միջանների աւերումներին և ջրանիւռաւորիկայ գարնան. բ. Աշնանացանը համարել աւելի դիմացկուն և ցանկելու համար աւելի պիտա-

է և մանաւանդ, երբ եղանակը հանդարտ է և շոգ, հացի բզեզը խիստ թեթեւաշարժ է դառնում և անդադար թռչում է այս հասկից այն հասկի վրայ և ասանց որ և է նկատելի պատճառի հեշտութեամբ փոխադրւում են ամբողջ խմբերով մի տեղից միւս տեղ և երբ նկատւում է մի որ և է մտեցող մարդ, բարձրանում է օդի մէջ: Հասկանալի է, որ այդպիսի դեպքում թակարդը իր ցանկալի նպատակին կարող կլինի ծառայել միայն այն ժամանակ, երբ թռիկի նման կսկի արագ շարժուել և միջոց չի տայ բզեզին պատուելու, որին նա շատ ընդունակ է:

Ա—*Կէ՛ն Կալանդրա* (долгоносикъ — Calandra granaria L.): Սա մի պատենաթեւ միջատ է, երկայն և բարակ եղջիւրաւոր կնճիթով, որ ուտում է զանազան հացարոյսերի հատիկներ, առաւելապէս շտեմարաններում: Բաց կամ մուժ կլինամոնի զոյն է ունենում: Երկարութեամբ 3—4 մմ, աչքերը համեմատաբար խիստ մեծ են լինում: Այս միջատը յարձակւում է առաւելապէս ցորենի հաճարի և գլխաւորապէս գարու և վարսակի հատիկներ վրայ, իսկ մանր սերմերի օրինակ կորեկի և զանազան խոտերի սերմերի վրայ մինչև այժմ չէ նկատուել: Շտեմարաններում ձմերոգ ուտիճը երեւան է գալի գարնանը շատ վաղ և սկսում է կերակրուել հացահատիկներով: Աւելի խիստ յարձակման են թակայ են լինում այն հացահատիկներ, որոնց կեղևը փխտուած է: Յերեկները ուտիճները հաւաքւում են արեւի տաքացրած և լուսաւորուած տեղերում, որից յետոյ էզը մանում է հացահատիկների մի որ և է կոյտի մէջ և դնում իւր ձուաները, այս բանի համար նա ընտրում է սովորաբար դեռ փխտուած, ամբողջ հատիկներից, որի մէջ նա իւր կնճիթով ծակ է բաց անում, ուր և տեղաւորում է ձուիկը, որից յետոյ անցքը փակւում է: Ձուաներ դնելու շրջանը կարող է տեւել մի քանի շաբաթ և այդ ժամանակուայ ընթաց

քում ուտիճը կարող է դնել մինչև 150 ձու, ասում են, որ մի զոյգը մի տարուայ մէջ մինչև 6000 կարող է դառնալ: Ձուաներ դնելուց 7—10 օր յետոյ դուրս են գալիս թրթուրներ, որոնք իսկոյն և եթ սկսում են ուտել աղահաւթեամբ հատիկների միջուկը և այդպիսով արագութեամբ աճում: Կեծացած թրթուրը սպիտակ է լինում, փոքրիկ շիկորակ գլուխ և յետին մասում կոնաձև վերջաւորութիւն է ունենում: Սա համարեա բոլորովին ուտում, դատարկւում է հատիկը, այնպէս, որ միայն արտաքին կեղևն է մնում, որի մէջ և 3—4 շաբաթից յետոյ կծկուում է, հարսնեակ է դառնում և ապա կարճ ժամանակուայ ընթացքում կատարեալ քղեղ—*ոսքէ՛ն* է կերպարանափոխուում, որը սկզբներում կերակրւում է նոյն հատիկի մէջ մնացած հիւթով և ապա դուրս գալիս: Վեց շաբաթուայ ընթացքում միայն այս փխտուակար միջատն առնում է իր կատարեալ հասակը: Այսպիսով թրթուրը և կատարեալ միջատը ուտում են հատիկի միջին մասը ամբողջապէս, այնպէս որ, երբ ուտիճը հատիկից դուրս է գալիս՝ մնում է միայն արտաքին կեղևը, որ լի է լինում կղկղանքով, ուտում է միայն աջ կամ ձախ կիսաբաժինը: Այս վերջին ձևով փխտուում են սովորաբար ցորենի հատիկները, իսկ առաջին եղանակով հաճարի հատիկները:

Սովորաբար արտաքին նշաններից չենք կարող մենք որոշել առողջներից այն հատիկները, որոնց մէջ զաւանուում են ուտիճի մատաղ թրթուրները: Բայց բոլորովին կամ կիսով չափ կերուած հատիկները հեշտութեամբ են նկատուում իրենց կեղևի դժգոյն մի տեսակ բծաւոր գոյնից, որի տակից նկատուում է մուժ հարսնեակը կամ ուտիճը: Ամառը դուրս եկած ուտիճները կրկին նոյն շտեմարաններում ձուաներ են դնում, իսկ աշնանը նրանց մէջ երեւան են գալիս այս միջատների մի նոր սերունդ: Արդեօք մի տարուայ ընթացքում ուտիճների քանի՞ սերունդ է հասունանում, այդ դեռ չի որոշուած:

Նկատուած է, որ ուտիճը յարձակւում է նաև ցորենի արմատի և մինչև անդամ դեռ դաշտերում հասկերի մէջ զանուոգ հատիկնե-

նացու. գ. Խողանները կրակ տալ, որով միջատները կիչանան և հողը կզառնայ պարարտ. գ. Խորհուրդ տալ, որ աշնանացանը կրակ տուած խողանների վրայ ցանուի:

բի վրայ¹։ Այսպիսի գէպերու մասին ըստ իմ հարկման (Класс черепашка) յարձակմունքներին է ենթակայ լինում որք իւր կնճիթը կոխելով ուտի՞ն թրթուր պարունակող հատիկի մէջ, սկսում է ծծել նրան անխնայ։ Այս թրթուրով վարակուած հատիկը հասկի մէջ դեռ շարունակում է աճել և լցուել, այնպէս որ կախած, հաւաքած հացահատիկը արտաքուստ վարակման ոչ մի նշան չի ցոյց տալիս, որովհետեւ թրթուրը այդ ժամանակուայ ընթացքում շատ մանր է լինում, միայն շտեմարաններում երբ հացահատիկը մի առ ժամանակ ընկած մնում է, երեւան է գալիս նորա խանգարմունքը։

Այս միջատները սիրում են տաքութիւն և 120° Ա. բարձր եղանակին զուարթ են լինում և շատ հեշտութեամբ կարողանում են զիմանալ մինչև 600° Ա.։ Յուրա եղանակներին շատ զգուշաւոր կերպով ծածկուում են քամուց և օդի ամէն տեսակ շարժումներից, այդ պատճառով անհրաժեշտ է, որ հացի բոլոր մթերանոցները կանոնաւոր օդանոցներ ունենան։

Այս միջատները միջատի գէմ պէտք է ձեռք առնել հետեւեալ միջոցները։

Ա. Իբրեւ հրապուելի միջոց դնում են շտեմարաններում ոչխարի մորթի, որի բրդի կողմով փռում են հացահատիկների վրայ։ Տաք տեղ որոնող ուտի՞նները ահագին խմբերով մտնում են մորթու բրդի մէջ, որտեղից և ամենայն օր առաւօտները նրանց թափ են տալիս ջրի մէջ։

Բ. Մթերանոցներից բոլոր հացահատիկները դուրս բերելուց յետոյ անհրաժեշտ է խնամքով հեռացնել շտեմարանից բոլոր մնացած հացահատիկները, փակել բոլոր անոցները, որպէսզի նրանցում ոչ մի վարակուած հատիկ մնացած չլինի։

Գ. Պէտք է շտեմարանները մաքուր պահել։ Հէնց որ ցորենը սկսի խոնաւանալ, նրա մէջ կսկսի գոյանալ ուտի՞ն, ուտի և բուսողուն միջոցն է շտեմարաններից դուրս բերել ցորենը և փռել արեւի տակ ու թիակով շարունակ քամուն տալ։ Այս միջոցն են գործ

ածում հայ գիւղացիները և յաջող հետեւանքների են հասնում։

Դ. Շտեմարանների մէջ միջնաբուն կարելի է տեղադրել։ Մըջիւնները շատ յաջող կերպով որսում են այս միջատներին և ամենայն օր (10—15 օրուայ ընթացքում) պէտք է դետեղել շտեմարանում մի նոր բուրդովին թարմ միջնանոց, մինչև որ այդ փոքրիկ միջատներն ոչնչանան։ Անասակար միջատներին ոչնչացնելուց յետոյ, մըջիւնները իրենք թողնում են շտեմարանը և հեռանում, բայց աւելի շուտ կարելի է հեռացնել, եթէ յատակի վրայ սրսկեն կարբօլեան թթուութեամբ։

Ե. Պէտք է շտեմարաններում պահել ոգիններ, որոնք ոչ միայն ահագին քանակութեամբ ուտի՞ններ կոչնչացնեն, այլ և կատաղի կռիւ կմղեն միւսերի դէմ։

Զ. Մի ամբողջ տարի հացահատիկների շտեմարանը դատարի թողնել։

Է. Բացի այդպիսի շտեմարանների պատերը կրածեփ անելուց, հարկաւոր է նաև յատակը վերցնել և նրա տակի հոգի երեսից մի շերտ դուրս բերել և խնամքով մաքրել և ապա ամբողջ շտեմարանը կրով ծեփել և յատակը կրկին ծածկել։

Ը. Կենդանիներով ջուր, որի մէջ թիթեղ կընկնի և կխեղդուի։

Թ. Երբեմն կարող է պատահել, որ այս ցոյց տուած միջոցներն արդիւնաւոր հետեւանքներ չունենան։ Այնպիսի ժամանակներս առանձնապէս ուշադրութիւն են դարձնում կարելուցն չափ թունաւորել միջատներին քիմիական նիւթերով։

Առաջին անգամ հիւսիսային Ամերիկայում ընդունուած է վերոյիշեալ նպատակի համար գործածել Բնաշխալի ԶԻՅԵՐԵՐԻ (Сибирь — улитки)։ Ամերիկացիներից բոլորովին անկախ այդ միջոցն փորձելով զրադուել է նաև Վարշաւայի սերմնաւորութեան կայարանի կառավարիչ Զ. Զելինսկին, որին յաջողուել է թունաւորել այս տեսակ ուտի՞նների 840/0¹։

Բնաշխալի ԶԻՅԵՐԵՐԻ գործադրելիս անհրաժեշտ է խմանալ, որ նա շատ ցնդող յատկութիւն ունի և հեշտութեամբ է բռնկուում, այս նիւթը թունաւոր է և ներս

1. Այդ նկատուած է Ստաւրապօլի նահանգում։

շնչելիս զլիսացաւ և փախումն է ասաջաց-
նում: Արանով կատարած գործողութիւնը
շատ արագ պէտք է տեղի ունենայ: Մի քա-
նի աշխատողները պէտք է արագութեամբ
լցնեն հեղուկը բաժակների մէջ և դնեն շտե-
մարանի այս և այն անկիւններում: Վերջին
բաժակը դնելուց անմիջապէս յետոյ պէտք է
պինդ փակել և հնար եղածին չափ ամուր
կերպով ծածկել բոլոր լուսամուտները և անց-
քերը: որովհետեւ հենց դրանից կախումն ու-
նի դործի յաջողութիւնը: Կարելի է բաց ա-
նել դռները և լուսամուտները 48 ժամ անց-
նելուց յետոյ: Նախ քան ներս մտնելը պէտք
է կանոնաւոր կերպով քամուն տալ ամբողջ
շտեմարանը: Յաջող հեռանքներ ունենալու
համար հարկաւոր է ընտրել մի հանգարտ օր:
Երբ քամի չկայ, հատիկների կոյտը ծածկել
ջրով լաւ թրջած քաթմանով և տակը դնել
բնաշխտան ծածխաքարով մի լի բաժակ: Յորե-
նիս գարուէ փարսակի: հաճարի 50 չեփերիկի
համար հարկաւոր է 1 գրուանքայ բնաշխ-
տան ծածխաքար: Կոյտերը շատ մեծ պէտք է
լինեն: Այս բոլորից յետոյ գործածութեան
համար ցորենը բոլորովին անփնաս է մնում:
բայց լաւ կլինի նախ քան ջրադաց ուղարկե-
լը խնամքով քամուն տալ: Արեւելի ամեցողու-
թեան վրայ ևս բնաշխտան ծածխաքար ոչ մի
փնասակար ներդործութիւն չի ունենում:

Այսպիսով ուրեմն ներկայումս հաստատա-
պէս իմացուած է, որ բնաշխտան ծած-
խաքան ապանելով ուտիճին: երբէք չի փնասում
հացահատիկներին:

Բայց այս ևս կայ, որ բնաշխտան ծած-
խաքան ամէն մի հողատիրոջ կամ երկրագործի
համար մնացելի է, և ամէն տեղ հեշտութեամբ
ձեռք չի բերուում: ուտի և դժուար թէ այս
նպատակի համար յիշեալ նիւթը մեր շրջա-
նում ընդարձակ գործողութիւն զանի:

Ժ. Յայտնի միջատարան Պ. Պորչինսկին
այս միջատին ոչնչացնելու և կամ հացահա-
տիկներին փնասուելուց ազատելու համար ար-
դէն մի քանի տարի առաջ խորհուրդ էր տա-
լիս և այժմ էլ նորից մասնացոյց է անում
այդ փնասակար միջատի դէմ ոչ սակաւ ներ-
գործող մի այլ միջոց: այն է՝ ձիւթ և կուպր:
որոնց հոտը այդ միջատի համար անտանելի

է, ուտի և սկսում են ահագին բազմու-
թեամբ փախչել շտեմարանից: հարկաւոր է
միայն կախ տալ շտեմարաններում: կուպրի մէջ
թաթախած քաթման: իսկ հացահատիկի կոյ-
տերի մէջ դնել կարծր ձիւթի մի կտոր: Այս
միջոցը թէպէտ չի սպանում միջատին, բայց
հացահատիկներն այդպիսով ազատում են
ոչնչանալուց և կարծում ենք, որ այս էլ
հարկաւոր է ամէն մի գիւղացու և կամ հա-
ցահատիկներ ամբարոյների համար:

ԽՆԴՐԱԾՂՐԻՒ (Gryllus gryllotalpa L.).
Սա մի աձեւ, զգուելի, ուղղաթիւ և թխազոյն
միջատ է: Մարմնն երկայնաձիգ է, գլխի ա-
ռաջին մասը երկայն է և ունի վեց թաթ,
որոնցից մի զոյգը գլխի մօտն է գտնուում և
լինում է կարծր լայն: խլուրդի թաթերի նման
տափարակ, ուժեղ և վերջաւորուում է մատ-
նաձեւ ափով: որոնցով հողը փորում է: Որով-
հետեւ իր թաթերի ձեւով և սովորութիւննե-
րով նման է խլուրդին: այդ պատճառով էլ
կոչուում է խլրդածղրիթ: Կզակն ուժեղ է,
վերին թեւերը փոքր են, ստորինները՝ երկայն:
Որովայնը երկայն է և վերջանում է մի զոյգ
խայթոցաձեւ պոչերով:

Այս միջատը խլուրդի պէս միջատակեր է
և չնայելով որ երկուսն էլ հաւատարմապէս և
որոշ չափով արտերիս պարտէզների համար
օգտակար են, այնուամենայնիւ երկրագործու-
թեան թշնամիների կարգն են դասուած:
Կաշտերի և պարտէզների միջ խիստ մեծ ե-
ռանդով ոչնչացնում են մանր միջատներ և
գետուներ, որոնք այնքան շատ են, որ առանց
խլուրդի և խլրդածղրիթի օգնութեան, մեր
հացարոյսերի և պտուղների մէկ կարեւոր մա-
սը պէտք է ոչնչացնէին: Բայց այդ միջատնե-
րին և թրթուրներին ձեռք բերելու համար
խլրդածղրիթը շարունակ փորում է գետիներ,
որի ժամանակ անխնայ կերպով կտրում է բոյ-
սերի արմատները, որոնք այլևս չկարողանա-
լով հողից սնունդ ստանալ, չորանում են:

Խլրդածղրիթը հողի որոշ խորութեան
մէջ հաւի ձուէ մեծութեամբ մի զոգաւոր
բոյն է շինում, որտեղ և աճում է մինչև
400 ձու: որոնք յուլիս ամսում թրթուր են
դառնում և յաջորդ տարին կատարեալ մի-
ջատ: Զուերը կանկիի հատիկների խոշորու-

Թեամբ, զեղնագոյն կանաչ ու երկայնաձև են լինում և բոլորը մի կծիկի պէս մածուցիկ նիւթով փակուած: Թրթուրները քանի մեծանան, նոյնքան աւելի կլմնանայ նրանց գոյնը:

Շատ միջատների պէս խրդածղրիթն ևս ահողջ ձմեռը թմրութեան մէջ է անցկացնում: Թաղուելով շատ խորը հողի տակ: Աշնանը սնունդ չգտնելով սկսում է ուտել իր ձագերը: Գարունն սկսուելուն պէս կամաց կամաց վեր է բարձրանում և 1—2 մաս երկրի մակերևոյթից ցած բազմաթիւ հորիզոնական գիբրով ստորերկրեայ անցքեր է սկսում փորել: Երոնը հողի չորացած և ձաքձաքած ժամանակը աչքի են ընկնում և յայտնի դառնում: Սովորաբար ապրում է թեթեւ հողի մէջ: Շատ հմուտ պարտիզականներ տեսնելով մարգերի մէջ տնկուած բոյսերից ոմանց թառամելը, չորանալը, իսկոյն հասկանում են, որ խրդածղրիթ կայ:

Այս փնասակար միջատը, յիշաւի կաբող էր երկրագործութեանը խիստ մեծ փնասներ պատճառելի թէ խլուրդները, շիկամկները և թռչունները նրանց մեծ ջարդ չտային: Մինչև այժմ այս միջատն ոչնչացնելու համար բազմաթիւ միջոցներ են հնարուած. յիշենք դրանցից միայն մի քանիսը:

Ա. Այտք է բանալ զաշտերի մէջ քառակուսի փոսեր և մէջը լցնել կովի աղբ: Երբ այս միջատներն սկսեն հաւաքուել այնտեղ ձմեռն անցկացնելու համար, պէտք է ժողովել և սպանել: Աւելի հեշտ միջոցն այս է. գեկտեմբերից մինչև փետրուար, երբ այս միջատները թմրած վիճակի մէջ են լինում, հարկաւոր է տալն ու վրայ անել այս աղբալոյտերը և կոտորել: Ոչնչացնել նրանց: Կարելի է նաև ապակեայ ամաններ թաղել դաշտի կամ պարտիկի մէջ երկրի մակերևոյթին հաւասար. միջատներն ընկնելով նրանց մէջ, այլևս չեն կարող դուրս գալ: Երբ աւելի հեշտ կլինի երկրագործի համար բռնել նրանց և ոչնչացնել:

Բ. Փորելով, պէտք է առաջ գնալ նրանց բաց արած անցքերով և հասնել որջերին— բնակութեան տեղերին և մի բաժակ ձիթախառն ջուր լցնել:

Գ. Գարնանը արտը հերկելիս հողի երե-

սին պէտք է ցանկել նախթալին*: Աս մի զօրաւոր միջատասպան նիւթ է, որ հողի հետ խառնուելով, ոչ միայն խրդածղրիթներին, նրանց ձագերին ու ձուերին է սպանում, այլ նաև ուրիշ միջատներ: Նախթալինը հաւասար չափով պէտք է խառնել աւաղի հետ: Մէկ օրավար տեղի համար մօտաւորապէս 4 փութ է հարկաւոր և եթէ այսչափ մեծ քանակութեամբ գնենք, գրուանքան 5—6 կուպ, կարելի կլինի ձեռք բերել: Այս հաշուով իւրաքանչիւր օրավարի համար մօտաւորապէս 8—9 ռուբ. ծախք կգնայ: Թէպէտ շատ է երևում այդ ծախքը, բայց 2—3 տարի ապրեցութիւն է ունենում:

Դ. Այս չորրորդ միջոցը միւսներից աւելի ազդու է: Գարնանը հողը հերկելուց առաջ պէտք է պատրաստել մեծ չափով ցնցոտիներ, որոնք շատ մանր կոտորելուց և նաւթի մէջ թրջելուց յետոյ տարածել հողի երեսը և հերկել: Հողի տակ ապրող միջատները խրդածղրիթների հետ միասին կատակեն: Այս դէպքում մէկ արտավարի համար թէպէտ ամենաշատը կծախսուի 4—5 ռուբ., բայց մի քանի տարի շարունակ հողերը ազատ կմնան միջատներից: Եթէ, հին շորերի կոտորանքների տեղ նոյն իսկ բրդի մանրուքներ գործածուեն, աւելի ազդու կլինի և հողն էլ այդպիսով մի քանի տարուայ համար բաւական աղբուած կլինի: Երբովհետեւ բուրդը իր մէջ բոյսերի համար սննդաբար նիւթեր է պարունակում:

Ոմանք ցնցոտիները կամ բուրդը նաւթով թրջելուց յետոյ, վերան էլ նախթալին են ցանում, որով աւելի զօրեղ է լինում:

Ե. Երբ բոյսերը դադարեն աճելուց, խրդածղրիթով հարուստ արտերի մէջ կարելի է թափել անասնոց մէղր և կամ հոտած աղ-

* Սա մի խառնուրդ է, որ գոյնով սպիտակ է լինում և փայլուն: Այս փոշու հոտը ոմանց ախորժիկ է, ոմանց անախորժ, ևեշտութեամբ է վառուում և արձակում է մրախառն բոց: Սբա սաստիկ հոտից զանազան ցեղեր իսկոյն ստատկում են, այդ պատճառով և ցանում են զգեստների վրայ: Սրանից պատրաստում են զանազան գունաւորիչ նիւթեր:

բաժուէր: Այս բանը հարկաւոր է կրկնել տա-
րուայ մէջ մի քանի անգամ:

(Շարունակելի)

Գ. Գ.



ՀԵՐԵՐՏ ՍՊԵՆՍԵՐԻ ԿԱՐԹԻՔԸ ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Իսկական օրէնսդիրը չպիտի խուսա-
փէ հոգեբանական ճշմարտութիւնից: Զպէտք
է կասկածել հետեւի ճշմարտութեան, որը
յաճախ անտես է առնուում: Մարդկային կար-
ծիքը կախուած է անմիջական կերպով
չփայտ-լէ-նէից և ոչ իմաց-լէ-նէից: Խմացու-
թիւնը ըստ ինքեան գործողութիւն չի յա-
ռաջացնում: Երբ ես յանկարծ գնդասեղով
ծակում եմ ձեռքս, կամ մատս եռացած
ջրի մէջ թաթիւում, ակամայ ցնցուում եմ:
Խիստ զգայութիւնից յառաջանում է անմի-
ջական շարժում, այն էլ ակամայ: Գորան հա-
կառակ միայն այն զիտակցութիւնը, թէ զըն-
դասեղը ծակում է, թէ եռացած ջուրը այ-
րում է—չի յառաջացնում իմ մէջ ոչ մի
շարժում: Անկասկած եթէ այդ զիտակցու-
թեան հետ միանում է և գնդասեղից կամ
եռացած ջրից յառաջացող վտանգը, այն ժա-
մանակ քիչ թէ շատ խուսափելու վճռական
զգացութիւն է յառաջանում: այդ բանին
զրդում է ինչ երեակայած ցաւը: Միայն
զիտակցելը, թէ խայթոցից կամ այրուելուց
ցաւ է յառաջանում—գործողութիւն չի
յառաջ բերում: գործողութիւնը սկսուում է
հէնց այն բոպէից, երբ բերանացի հաստա-
տուած կամ վերացականօրէն զիտակցած ցա-
ւը դառնում է իրական զիտակցութիւն կամ
սպառնացող ցաւ, երբ զիտակցութեան մէջ
յառաջանում է ցաւի կենդանի պատկերա-
ցումը, իրեւ առաջուց կրած ցաւի մի անորոշ
պատկեր: Այսպէս ուրեմն գործողութեան
պատճառը այդ զէպրումն ինչպէս և այլ զէպ-
քերումն լինում է, ոչ թէ իմացութիւնը, այլ

զգայութիւնը: Այն ինչ որ պարզ գործողու-
թեան մէջ տեսանք, նոյնը նաև ամենաբարդ
գործողութեանց մէջ ենք նկատում: Խմացու-
թիւնն ինքը անկախ կերպով գործողութեան
շարժիչ է: այլ միայն, երբ միացած է նո-
րան զրգռող զգայութիւնը: Գինեմոյր լաւ
գիտէ, որ այսօրուան ցոփութիւնից յետոյ
վաղը առաւօտեան գլխի ցաւ, յոգնածութիւն
պիտի զգայ, բայց այդ ճշմարտութեան գի-
տակցութիւնը նորան չի սարսափեցնում: մին-
չև որ չի ծագում նորա մէջ իրան սպառնա-
ցող ձանձրոյթի կենդանի պատկերը, քանի
զեռ զգայութիւնը, որը հակադրուում է
արեցութեանը, չի հասնիլ այնպիսի ոյժի,
որ կարողանայ հաւասարակշռել այդ ցոփու-
թեանը: Միեւնոյնը կարելի է ասել նաև ամեն
մի անհոգութեան համար: Երբ սպառնացող
շարիքը երեակայութեան առաջ լաւ պատկերա-
նում է և սպառնացող չարչարանքը բոլորովին
զգալի է, այն ժամանակ մարդս ստնձահարում
է ներկայ ցանկութեանն անյատաղ բաւակա-
նութիւն տալու ձգտումը: Բայց երբ չկայ
սպառնացող չարչարանքի համար կատարեալ
զիտակցութիւն—ներկայ ցանկութիւնը չի
հանդիպիլ բաւականացուցիչ հականերգործու-
թեան: Գիտակցում ենք ամբողջովին այն ճըշ-
մարտութիւնը, թէ անհոգութիւնը խեղճ
թշուառ դրու թիւն է ստեղծում: Բայց այդ
զիտակցութիւնը մնում է առանց հետեանքի,
մինչև որ թշուառութիւնը չի ներկայանում
կենդանի պատկերով մեր երեակայութեան մէջ:
Մովի ասին կանգնած են մի խումբ մարդիկ,
նաւակը շուռ եկաւ և մարդը խեղդուում է,
բոլորը պարզ տեսնում են, ինչպէս 2+2-ը
կդառնայ 4, որ նա կխեղդուի, եթէ չօգնեն:
Բոլորը գիտեն, որ կարելի է նորան ազատել,
եթէ մի լուրորդ ընկնի ջուրը և զէպի նա
լողայ: Ի ծննդենէ բոլորին էլ ասուած է, որ
իւրաքանչիւրի վերայ պարտք կայ զրուած
օգնելու մերձաւորին վտանգի ժամանակ: Բո-
լորը զիտակցում են, որ իրենց վտանգի են-
թարկելը մարդուն մահուանից ազատելու
համար, ասին և փառաւոր գործ է: Շա-
տերը գիտեն և լողալ, բայց ինչու ոչ որ իրեն
ջուրը չի ձգում և բոլորն էլ բաւականանում
են կամ խեղդողին խորհուրդներ տալով: